## *31. Դատական պատասխանատվության ենթարկվածների թվաքանակ, կազմ և քրեական պատժատեսակների կիրառում*

2002թ. հանրապետությունում դատապարտվածների թվաքանակը 2001թ. համեմատ նվազել է 12.2%-ով և կազմել է 4821 մարդ: Նրանցից 329-ը կամ 6.8 %-ը` կանայք են, 201-ը կամ 4.2%-ը` անչափահասներ:

***31.4. Դատապարտված անչափահասների թվաքանակն ըստ հանցատեսակների և սեռի:*** 2001թ. համեմատ անչափահաս դատապարտվածների թվաքանակը նվազել է 19.9%-ով, իսկ աղջիկներինն ավելացել է 2 անգամ:

**Անչափահաս դատապարտվածների քանակական բաշխվածությունն ըստ սեռի, 2000-2002թթ.**

*(մարդ)*

| | 2000 | | | 2001 | | | 2002 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ընդա-մենը | աղջիկ | տղա | ընդա-մենը | աղջիկ | տղա | ընդա-մենը | աղջիկ | տղա |
| Գույքի հափշտակում` | 155 | 3 | 152 | 181 | 2 | 179 | 109 | 2 | 107 |
| այդ թվում` գողության միջոցով | 143 | 3 | 140 | 165 | 2 | 163 | 94 | - | 94 |
| կողոպուտի միջոցով | 11 | - | 11 | 12 | - | 12 | 14 | 2 | 12 |
| ավազակության միջոցով | - | - | - | 3 | - | 3 | - | - | - |
| խարդախության միջոցով | 1 | - | 1 | 1 | - | 1 | 1 | - | 1 |
| Դիտավորյալ սպանություն | 4 | - | 4 | - | - | - | 1 | - | 1 |
| Խուլիգանություն | 8 | - | 8 | 3 | - | 3 | 5 | - | 5 |
| Թմրամոլության հետ կապված հան-ցագործություններ | 4 | - | 4 | - | - | - | 2 | - | 2 |
| Այլ բնույթի հանցագործություններ | 92 | 2 | 90 | 67 | - | 67 | 84 | 2 | 82 |
| Ընդամենը | 263 | 5 | 258 | 251 | 2 | 249 | 201 | 4 | 197 |

Անչափահաս դատապարտվածների ընդհանուր թվաքանակում մեծ տեսակարար կշիռ են կազմել (46.8%) գողության միջոցով գույքի հափշտակության համար դատապարտվածները, որոնց թվաքանակը 2001թ. համեմատ նվազել է 26.6%-ով:

Դատապարտված անչափահասներից 96-ը` չաշխատող և չսովորող են, նրանցից 10-ը` հանցագործությունը կատարել են հարբած վիճակում, 124-ը` խմբով, ընդ որում նրանցից 46-ը` մեծահասակների մասնակցությամբ:

**Դատապարտվածների թվաքանակը, 1990-2002թթ., մարդ**

